ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ «ԱՆՈՒՆԸ» (ՀԿ)
SPECIAL TOPIC: THE NAME OF YHWH (OT)

«Անուն» բառի կիրառությունը որպես հենց Ինքը ՅԱՀՎԵԻՆ փոխարինող զուգահեռվում է Ելից 23:20-33 «հրեշտակ» բառի կիրառության հետ, որի համար ասվում է, որ ունի «Իմ անունը Իր մեջ»: Այս նույն փոխարինումը կարելի է տեսնել «Նրա փառքը» խոսքի կիրառության մեջ (օր.՝Հովհ.1:14, 17:22, տես՝ Հատուկ Թեմա. Աստված նկարագրված որպես մարդ): Այս բոլոր օրինակներն էլ փորձում են մեղմացնել ՅԱՀՎԵԻ մարդեղեն ներկայությունը (տես՝ Ելից 3:13-16, 6:3): ՅԱՀՎԵԻ մասին իհարկե խոսվում է մարդկային տերմիններով, սակայն նաև հայտնի է, որ Նա հոգով ներկա է ամբողջ Իր ստեղծագործության մեջ (տես՝ 3 Թագ.8:27, Սաղմ.139:7-16, Երեմ.23:24, Գործք 7:49 մեջբերում է Եսայի 66:1):

Գոյություն ունեն «անուն» բառի մի քանի օրինակներ, որոնք ներկայացնում են ՅԱՀՎԵԻ աստվածային էությունը և անձնապես Նրա ներկայությունը:

1. 2 Օրինաց 12:5, 2 Թագ.7:13, 3 Թագ.9:3, 11:36
2. 2 Օրինաց 28:58
3. Սաղմ.5:11, 7:17, 9:10, 33:21, 68:4, 91:14, 103:1, 105:3, 145:21
4. Եսայի 48:9, 56:6
5. Եզեկ.20:44, 36:21, 39:7
6. Ամովս 2:7
7. Հովհաննես 17:6,11,26

ՅԱՀՎԵԻ անունը «կանչելու» հասկացությունը (այսինքն՝ երկրպագելու) երևում է Ծննդոցի ավելի վաղ շրջանում՝

1. 4:26, Սեթի սերունդը
2. 12:8, Աբրահամ
3. 13:4, Աբրահամ
4. 16:13, Հագար
5. 21:33, Աբրահամ
6. 26:25, Իսահակ

և Ելիցում՝

1. 5:22-23, Քո անունով խոսելու
2. 9:16, ամբողջ երկրում Իմ անունը պատմվի (տես՝ Հռոմ.9:17)
3. 20:7, Քո Տեր Աստծո անունը դատարկ տեղը չհիշատակես (տես՝ Ղևտ.19:12, 2 Օր.5:11, 6:13, 10:20)
4. 20:24, Իմ անունը հիշատակվելիս (տես՝ 2 Օր.12:5, 26:2)
5. 23:20-21, մի Հրեշտակ («որովհետև Իմ անունը նրա մեջ է»)
6. 34:5-7, Մովսեսը կանչում է (կամ «կանչեց») Տիրոջ անունը: Սա այն բազմաթիվ տեքստերից մի փոքր մասն է ներկայացված, որտեղ նկարագրվում է ՅԱՀՎԵԻ բնավորությունը (տես՝ Նեեմ.9:17, Սաղմ.103:8, Հովել 2:13):

Ինչ-որ մեկին անունով ճանաչելը մատնացույց է անում մտերմություն (տես՝ Ելից 33:12), Մովսեսը ճանաչում է ՅԱՀՎԵԻ անունը և 33:17-ում Յահվեն ճանաչում է Մովսեսի անունը: Սա այն հատվածն է, որտեղ Մովսեսը կամենում է տեսնել Աստծո փառքը (տես՝ հ.18), սակայն Աստված թույլ է տալիս նրան տեսնելու «Իր բարությունը» (հ.19), որը համազոր է «անվանը» (հ.19):

Իսրայելացիներին հրամայված էր բնաջնջելու Քանանի աստվածների անունները (տես՝ 2 Օր. 12:3) և Նրան կանչելու (տես՝ 2 Օր.6:13, 10:20, 26:2) մի հատուկ վայրում, որտեղ Նրա անունն էր բնակվելու (տես՝ Ելից 20:24, 2 Օր.12:5,11,21, 14:23,24, 16:2,6,11, 26:2):

ՅԱՀՎԵՆ ունի տիեզերական նպատակ, որի մեջ ներգրավված է Իր անունը:

1. Ծնն.12:3
2. Ելից 9:16
3. Ելից 19:5-6
4. 2 Օրինաց 28:10,58

5. Միքիա 4:1-5